112 Մարանաթա՛, մարանաթա՛,

1. Մարանաթա՛, մարանաթա՛,
Մարանաթա՛, Տերը կուգա,
Վերջին օրերու որդի ենք,
Քրիստոսով զիրար մենք սիրենք,
Մեղավորներն Իրեն բերենք,
Զինք դիմավորելու ելլենք:

Մարանաթա՛, Տերը կուգա (4):

2. Մարանաթա՛, մարանաթա՛,
Մարանաթա՛, Տերը կուգա,
Ինք խոստացավ՝ նորեն կուգամ,
Բայց նախ պետք է երկինք երթամ:
Երբ ժամանակներն վերջանան,
Ես ամպերով նորեն կուգամ:

3. Մարանաթա՛, մարանաթա՛,
Մարանաթա՛, Հիսուս նորեն կուգա:
Տե՛ս նշաններն երկրի վրա,
Որ մինչ այսօր կերևնան,
Որոնք կըսեն, թե Տերն, ահա,
Հանկարծ երկնքեն պիտի գա:

4. Մարանաթա՛, մարանաթա՛,
Մարանաթա՛, Հիսուս նորեն կուգա,
Ո՛վ Տեր Հիսուս, շուտով եկուր,
Սկսած գործդ վերջացուր,
Այս չար աշխարհեն մեզ վերցուր,
Երկնից փառքիդ արժանացուր: